


ՉՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ ԿԸ ԽՕՍԻ

(6)



Է.

Ես հեռացալ Հանրապետութեանն, որպէսզի մասնակից չլինիմ այն բոլոր անպատուարքեր, անմիտ, սրնանկ եւ ազգակործան գործունէութեան, որուն նուիրուեցան հանրապետութեան վարիչները առաջին օրէն:

Պ. Երատիսեան Պաթումի դաշնագիրը ստորագրելէն ետք թիֆլիսի մէջ կը յայտարարէր թէ թուրքերը զարդացած եւ ճէնթլմէն մարդիկ են եւ թուրքիոյ հայերը չեն կրցած անոնց հետ վարուելակերպ ունենալ:

Երեւանի մէջ կը հազուեցնէին մեր սիրուն աղջիկները. որպէսզի կայարանի մէջ ծաղկեփունջերով դիմաւորեն Խայիլ եւ Նուրի փաշաները, որոնք հարիւր հազարաւոր հայուհիներու բռնարարել եւ կոտորել տուած էին: Երեւանի մէջ զինւորական նուազախումբերով ճաշ կերոյթներ կը տրուէր այս մարդոց:

Շքախումբեր կը դրկուէին Տրապիզոն եւ Կ. Պօլիս, ոճրագործ էնվէրներու եւ թալէաթներու մօտ:

Թիֆլիսի մէջ երեք ամիս կը վիճէին թէ մեր բանակը պէտք է կազմել տէմոքրաթիկ սկզբունքներով, ինչ որ կը նշանակէր տիտիլիսը վերցնել:

Ջինադադարէն ետք հանրապետութեան վարիչները ցոյց չտուին իմաստութեան ո՛րեւէ նշոյլ:

Պաշտօնատունները լեցուեցան դաշնակցական պաշտօնէութեամբ, որոնց թիւը կը հասնէր 16 հազարի: Ճակատ դրկուեցան Դաշնակցութեան չպատկանող եւ հակառակորդ տարրեր միայն:

Իւրաքանչիւր զինւորականի քով դաշնակցական լրտես մը դրուեցաւ:

Խորհրդարան մը կազմուեցաւ զուտ դաշնակցականներէ, որոնց մէջ կային քանի մը ընկերուհիներ ալ:

ներքին պալաքար մղուեցաւ միւս հալ կուսակցութեանց դէմ երկրին մէջ թէ երկրէն գուրս: Իսկ հայ պօլ-շեւիքներուն դէմ յայտարարեցին եղբայրասպան կոխ:

Պատերազմ ըրին Վրաստանի դէմ երեք հոգիի որոշումով եւ Հայաստան մատնուեցաւ սովի:

Զկրցան հետեւիլ շրջահայեաց ներքին քաղաքականութեան մը եւ առաջ բերին ապստամբութիւններ թաթարական շրջաններու մէջ:

Մերժուեցան Ազգ. Պատուիրակութեան առաջարկները համաձայնութեան մասին:

Այս բոլորը արդիւնք էին մտայնութեան մը, որ չէր զանազանուեր Ռուսիոյ արդի վարիչներուն մտայնութենէն:

Ես կը նախատեսէի թէ բոլոր այն աթոռները, զոր գրաւած էին Երեւանի ղեկավարները, խարխուլ էին, քանի Ռուսաստան իր վերջին խօսքը չէր բսած:

Դժբախտաբար այսօր իրականութիւն մըն է, ինչ որ նախատեսած էի:

Այն մարդիկ որոնք կը հիանային թուրքերու ճէնթլմէնութեան վրայ, ստորագրեցին Աղէքսանդրապօլի դաշնագիրը, ցեխի մէջ թաթիւելով այն ոսկէ զրիչը, որով ստորագրուած էր Սէվրի դաշնագիրը:

Անցեալ տարի երբ Ամերիկա կը գտնուէի, Գ. Փաստրմաճեան աղմուկ մը փրցուց, բսելով թէ Պօղոս Նուպար Հայաստանի հարաւային մասը քիւրտերուն կը յանձնէ:

Սակայն չլսեցի տակաւին թէ ի՞նչ կը խորհի միեւնոյն Փաստրմաճեանը եւ ինչո՞ւ շշուկ մը իսկ չի հաներ ամբողջ թրքահայաստանը մեր թշնամիներուն ծախողներուն դէմ:

Հայկ. Հանրապետութիւնը վիժեցաւ, որովհետեւ շէնք մը շինելու համար յաւ ճարտարապետներ պէտք էին, մինչդեռ անոր ղեկավարները հիմը դրին օդին մէջ, փոխանակ հաստատուն ղետնին վրայ ղեկու:

Ուրիշին հոր փորողները իրենք մէջը ինկան:

Իմ խիղճս եւ հոգիս հանդարտ է այս բոլորին մէջ:

Մնացածը կը թողում անաչառ պատմագրին, որպէսզի երեւան հանէ բոլոր անոնք, որոնք պատճառեղան այսքան անմեղ արիւններուն թափուելուն:

ԱՆԴՐԱՆԻԿ

(Վերջ)